

ԿՐԿԻՆ «Ո՛Ր, Ե՛Ւ ԵՐԻՑՍ Ո՛Ր»

Posted on April 15, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 13 Ապրիլ 2018

Սոյն թերթին մէջ վերջերս իմ արտայայտած միտքերս [«Ո՛չ, եւ երիցս ո՛չ»](#) վերնագրով խրախուսած է մեր ընթերցողներէն ոմանց արտայայտուիլ իմ տուած գնահատումներու «Եղբայրասպանութիւն» եզրին մասին, բառ մը, որով որակած են ոմանք 1956-1958-ի Լիբանանի մէջ կուսակցութեան մը կողմէ նախաձեռնուած եւ իրագործուած՝ «ղիմացի»ներէն զոհեր խլելով մենատիրութեան հասնելու համար:

Ի հարկէ այդ «ղիմացիները» կամ «միւս կողմիները» իրենց գիտցածէն ետ չմնացին եւ ոչ ալ վախցան, այլ պարզապէս Պուրճ-Համմուտը ձգելով փախան եկան իրենց համար աւելի ապահով շրջաններ:

Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 13 Ապրիլ 2018

Սոյն թերթին մէջ վերջերս իմ արտայայտած միտքերս [«Ո՛չ, եւ երիցս ո՛չ»](#) վերնագրով խրախուսած է մեր ընթերցողներէն ոմանց արտայայտուիլ իմ տուած գնահատումներու «Եղբայրասպանութիւն» եզրին մասին, բառ մը, որով որակած են ոմանք 1956-1958-ի Լիբանանի մէջ կուսակցութեան մը կողմէ նախաձեռնուած եւ իրագործուած՝ «ղիմացի»ներէն զոհեր խլելով մենատիրութեան հասնելու համար:

Ի հարկէ այդ «ղիմացիները» կամ «միւս կողմիները» իրենց գիտցածէն ետ չմնացին եւ ոչ ալ վախցան, այլ պարզապէս Պուրճ-Համմուտը ձգելով փախան եկան իրենց համար աւելի ապահով շրջաններ:

Մէջտեղ մնացին անմեղ զոհերը: Երախաներ մէկ օրէն միւս օրը որբացան, կիներ այրիացան, քոյրեր, եղբայրներ ու մայրեր աղի արցունքներ թափեցին տասնամեակներով: Դժբախտաբար նշուած թուականներուն երկրին պետութիւնը գաղտնօրէն սատար կը կենար, ինչպէս ժողովուրդը կ'ըսէր. «ոստիկանութեան այս դուռէն կը մտցնէին միւս դուռէն կը հանէին»:

Նախայարձակ կողմը միայն այն ատեն զսպուեցաւ, երբ տեսաւ թէ անխոցելի չէ ինք եւ համբերութեան բաժակը երբ կը լեցուի «խենթերն են գտնում հնար»: Դժբախտաբար այս էր միակ միջոցը խելքի բերելու նախայարձակները:

Մեզի համար դժուար է այս մասին կրկին անգամ անդրադառնալ «որպէսզի հին վերքերը չարձարծուին նորէն» եւ «հարիւր տարի առաջ» կատարուած ողբերգական դէպքերը ի լոյս չբերուին նորէն: Բայց, երբ տեսանք թէ անճիշդ ու ապակողմնորոշիչ որակումներ ու վերնագիրներ կը տրուին «հարիւր տարի առաջ» կատարուած դէպքերու մասին, ստիպուած էինք կատարել ճշգրտումներ ԱԿԱՄԱՅ:

Մենք այս տողերն ալ չէինք գրեր, եթէ մեր բարեկամները չխրախուսէին մեզ, նոյնիսկ խնդրելով որ պատասխան մը պետք է տալ:

Սիրելի ընթերցող, մեր մարող ու շիջող հայ մամուլը ցեխարձակելու պետք չէ ծառայել: Որպես երկարամեայ լրագող, հրապարակագիր ու ամերիկեան մամլոյ դասընթացքներու հետեւեաժ սիրողական թղթակից, միշտ հեռու եղաժ եմ նման մօտեցումներէ: Մենք` հայերս, թե՛ սփիւռքի եւ թե՛ հայրենիքի մեջ այնքան մտահոգութիւններ, ցաւեր ու հարցեր ունինք որ պետք չէ տխուր դեպքերու արժարժումները մեզի համար դարձնենք գրելու նիւթ: Աշխարհը կը պատրաստուի շրջանային նոր պատերազմի մը մեր սահմաններէն ոչ շատ հեռու եւ չենք գիտեր պատերազմի հուրն ու բոցը մինչեւ ուր կրնան տարածուիլ: Մենք պետք է մտածենք նման պատերազմի մը ատեն մեր ընելիքներու մասին:

